Արձանագրություն N 2
ՀՀՊԵԿ-ԷԱՃ-ԱՊՁԲ-22/19 ծածկագրով էլեկտրոնային աճուրդի
գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան

28 հոկտեմբերի 2022թ.
ժամը 11:00

Մասնակցում էին հանձնաժողովի՝
Նախագահ՝ ԳՕ Գալստյանը
անդամներ՝ ԱՕ Ավետիսյանը, Զ. Աղաջանյանը
քարտուղար՝ Ա. Ասատրյանը

I. Հայտերի բացման մասին

(Գ. Գալստյան)

1. Ընդունել ի գիտություն, որ ժամկետում և սահմանված կարգի պահանջներին համապատասխան հայտ են ներկայացրել հետևյալ կազմակերպությունները.

| Հ/Հ | Մասնակցի անվանումը | Մասնակցի տվյալները |
|---|---|---|
| 1 | «Բրենդ Քոմփյութերս» ՍՊԸ | ք. Երևան, Հանրապետության 62, հեռ. 060 27 01 30 |

| Հ/Հ | «Բրենդ Քոմփյութերս» ՍՊԸ | նախահաշվային գին |
|---|---|---|
| | Գնային առաջարկ առանց ԱԱՀ | |
| 1 | 96 896 250 | 117 450 000 |

2. Մասնակցի փաստաթղթերում առկա են անհամապատասխանություններ, մասնավորապես՝ հստակ ներկայացված չէ տեխնիկական բնութագիրը և օպերացիոն համակարգը, հրավերով սահմանված «Արտադրող ընկերությունը պետք է ներառված լինի համաշխարհային մարքեթինգային վարկանիշ տրամադրող IDC-ի կամ Gartner-ի 2021 թվականի համակարգչային սարքավորումներ արտադրող կազմակերպությունների ցանկի առաջին հնգյակում» պայմանի համար ներկայացրել է հղում ոչ թե 2022 թվականի, այլ 2021 թվականի համար: Մասնակիցը նաև պետք է ներկայացնի հայտի ապահովում բանկային երաշխիքի (հավելված 2) կամ կանխիկ փողի ձևով, որի չափը հավասար է գնման գնի հինգ տոկոսին:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

II. Գնահատող հանձնաժողովի որոշման մասին

(Գ. Գալստյան)

3. Հիմք ընդունելով հայտերի գնահատման արդյունքները հանձնաժողովը որոշեց.

ա) ՀՀ կառավարության 04 մայիսի 2017 թվականի N 526-Ն որոշման 41-րդ կետը և ՀՀ կառավարության 18 մայիսի 2017 թվականի N 534-Ն որոշման 10-րդ կետի 2-րդ ենթակետի (եթե առաջին տեղը զբաղեցված մասնակցի հայտը գնահատվում է բավարար, ապա վերջինս հայտարարվում է ընտրված մասնակից, իսկ մյուս

մասնակիցների հայտերը մերժվում են) կասեցնել նիստը մեկ աշխատանքային օրով և ծանուցել «Բրենդ Քոմփյութերս» ՍՊԸ-ին մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել ներկայացված փաստաթուղթը:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

Հանձնաժողովի

նախագահ՝ ____________ Գ. Գալստյան

անդամներ՝ ____________ Ա. Ավետիսյան

____________ Ջ. Աղաջանյան

քարտուղար՝ ____________ Ա. Աստրյան